



ՇԱՎԱՐԾ ՎՐԴ. ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ

(Կարողիկոսական փոխանորդ  
Դամասկոսի քեմին)

## ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Հավի քաջ զանձն իւր դնէ,  
ի վերայ ոչխարաց»:  
ՀՈՎՀ. Ժ. 11:



այրենասիրությունը մեկն է հավետ  
ողբացյալ շնորհազարդ Գարեգին  
Ա. Կաթողիկոսի շնորհալիորեն տո-  
կում նկարագրին և մեծ անհատա-  
կանության գծերեն, որոնք իրենց թեզանով  
և առէջով կհորինեն անոր լուսավոր դիմա-  
գիծը:

Հայրենասիրությունը իրը մարդու հոգիի  
շիդերեն սարգված յոթնալար քնար, ունի իր  
իմաստասիրությունը, ինչպես մարդկային  
կյանքի ամբողջությունը հորինող հոգեկան,  
իմացական, ընկերային և այլ զանազան  
երևույթներ:

Հստ երջանկահիշատակ հայրենասիրի՝  
«Հայրենասիրությունը մի բնական զգացում  
է հաստատված մեր սրտի խորքերում»: Ինչ-  
պես բնական է սերը դեպի ծնողները և դա-  
տապարտելի այն որդու վարժումնքը, որ ան-  
արգանքով է վարվում նրանց հետ, նույն-  
շափ բնական է սերը և դեպի Հայրենիքը և  
դատապարտելի դեպի նորա շահերը ցուց  
տված ապերախտությունը: Մենք ոչ միայն  
մեր ծնողների զավակներն ենք, այլև մեր  
Հայրենիքի. մեր կյանքի առաջին վայրկյա-  
նից կապված ենք Հայրենիքի հետ, նորա  
օդն ենք շնորհ, նորա ջուրը խմում, նորա  
բերքերով կերակրվում: Բնական է նույնպես  
և մարդու սերը դեպի յուր բնիկ ժողովուր-  
դը: Մեր երակների մեջ նույն արյունն է վա-  
զում. նույն վարդուրարդով, սովորություննե-  
րով, նույն անցյալով և ապագա հույսերով

կապված միմյանց հետ: Ամենքի բերանում  
նույն լեզուն է հորջորջվում և հարլուրավոր  
և հազարավոր տարիների պատմություն,  
անցյալի հիշողություն, ուրախություն և  
վիշտ, հաշողություն և կամ ձախորդություն  
ընդհանուր է ամենքի համար...»:

Հայրենասիր Հայրապետի համար հայրե-  
նասիրությունը կներկայանար բոլորովին  
տրամարանական, հաշտ և համերաշխ, և  
բարձրորեն գիտակից երևույթով. ան ուներ  
իր Մայր Հայրենիքը, սկիզբն ու վախճանը  
իր ասդենական գոյության, և որդեգրյալ երկ-  
րորդ հայրենիքները, ասպնջական կիրանանն  
ու Մուտիկան, որոնց հանդեպ կտածեր և  
կհորդորեր իր զավակները որ տածին որ-  
դիական սեր և գուգագուանք, քաղաքային և  
քաղաքացիական հավատարմություն և հնա-  
զանություն, ինչ որ սրտագին հորդորն է  
նաև Հայ Եկեղեցվո պետ Նորին Սուրբ Օծու-  
թյուն Գեորգ Զ. Կաթողիկոսին: Հայրե-  
նասիրությունը արգելք չէ երբեք հան-  
գուցյալ Հայրապետի որդեգրյալ Հայրենյաց  
հանդեպ տածած սիրուն. ընդհակառակը,  
առաջինը երաշխիքն է երկրորդին և ով որ  
տիրապես հայրենասիր չէ, չի կրնար սիրել,  
անկեղծորեն, բոլորանվեր սրտով, որդեգրյալ  
Հայրենիքը, նա կիրեր Մայր Հայրենի-  
քը և նույն սիր կհորդորեր ամենքը, առանց  
դույզն ինչ թերանալու զմեզ հյուրզնկալող  
Հայրենյաց հանդեպ մեր ունեցած մեր պար-  
տականությանց մեջ, ինչպես որ Մեծն կի-  
րանան կամ ազնիվ Մուտիկա որդիական սեր  
և գուգագուանք պիտի ակնլալեին արտասահ-  
մանի իրենց զավակներեն, նույն տածին ու-

1. Շավարշ վարդապետ Գույումնեանի ներկա Հոդ-  
վածը տպագրվում է փոքր կրծատումներով: — ԽՄԲ.

բախսանալով, որ անոնք հնագանդ, հավատարիմ և բարի քաղաքացիներ և կամ բնակիչներ են զանազան երկիրներու մեջ։ Հայրենասեր Հայրապետի սիրտը կտրոփեր սիրովը Հայրենյաց իրը աղբյուր ներշնչման և միխթարության։ «...Մեր ձեռքն է միայն մեր պատմական Հայրենիքի մի փոքր մասը, ավելի քան մի միահան հայ բնակչությամբ, հայրենի ավերակներով, որ մեր կյանքի գոյության խարիսխը պիտի մնա այսուհետև ևս. բայց մեր ժողովրդի մեծագույն մասը հայրենազուրկ է և ցրված... Հայրենազուրկ և գաղափարազուրկ կյանքով ապրի շնոր կարող. ազգային տեսակետով ապարախտ այս նոր պայմանների մեջ պետք է զորանա և ուռմանա Հայրենիքի և հոգեոր Միության գաղափարը ավելի լայն և ավելի խորը, լուսավոր հասկացողությամբ»։

Հայրենիքը հասարակաց և բանդակախմայր ըլլալու և միասնականության գիտակցության ոսկեշղթան պետք է որ ի մի զողե Հայրենյաց և Սփյուռքի բոլոր հայերը. նույն շղթայի օղակներու թուացումով և անկումով քայքայիկեցան և սպասազուռ անհետացան Պղոնին և այլ երկիրներ տարագրված հարյուր հազարավոր հայրենակիցները, որոնց հուշքը կարեվեր կխոցի Հայրապետի սիրտը. Նա իրը անխառն հայրենասեր, ծնած է հայ ժողովրդի ծոցեն, անոր հետ շնչելու և անոր սիրուցն մենահետ համար, «Հազիկ 18 տարեկան, արձակուրդի օրերուն կերթա Արագածի վրայով Անիի հնությունները տեսնելու։ Այս 14 օրվան պատվուն ու այցելությունը շատ խոր տպագորություն կթողուն ապագա գրագետ բանասերին վրա և կտուգորեն զինքը հայրենասիրական զգացումներով, որոս չեր դադրած արտահայտել, ինչպես վերադարձն իր բոլոր ընկերներուն, նույնպես ալ՝ կյանքի ամբողջ տեսողությանը՝ իր քարոզներուն, զասախտությանց և գրական արտագրությանց մեջ անդամ»։

«...Իզմիրլանի կաթողիկոսության օրով կվարե խորհրդականի պաշտոնը և աքտորվելու սպառնալիքը անտեսելով՝ հողային խնդրի պատճառավ օրթոդոքսության զիմով կեշըլու գյուղաքաղաքի դավանափոխի հանայնքը՝ երեք շարթվան ընթացքին՝ Մայր Եկեղեցին ծոցը կվերադարձնե, զղջման թուղթ ստորագրել տալով և կստանա հատուկ օրհնության գիր իզմիրլան կաթողիկոսեն»։

Ազգին ցավերը կնկարագրե նույն ինքն հանգուցյալ Հայրապետը՝ հայրենասերի շերժ գացումներով։

«1914—15 թվականի աղետարեր օրերին Վասպուրականի, Ալաշկերտի և Վանա լճի

հյուսիսային գավառների հայ ժողովուրդն ստիպված էր տեղահան լինել և զաղթել զեպի էջմիածին և Արարատյան երկիրը. ականատես էինք այն աղեկտուր տեսարանին, որ կատարվում էր մեր շուրջը. իրեւ Եղբայրական օգնության վարչության անդամ և ի պաշտոնե շփման մեջ էինք լույր շրջանների գաղթականությանց հետ, հարկավոր նյութական և բժշկական օգնությունները կարգադրելու երասխի ափերից մինչև էջմիածին, պղղոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անտառի և ծեմարանի բակի և պարտեզի մեջ, պարհսպների տակ փոված էին մոտավորապես 150.000 փախտականներ բաց երկնքի տակ...»

«Ճանապարհի հոգնածությունը, շատերը ուրագ և ձյունապատ լեռներով անցած, սննդի պակասությունը, համաճարակները, որպես հետևանք ստեղծված պայմանների, իրենց ավերն էին կատարում ժողովրդի մեջ, խղերան, գիշինտերիան, ժանատենդը յուրաքանչյուր օր խլում էին մեզանից մի քանի հարյուր հոգի, և մենք սալերով հավաքել էինք տալիս զիակները և լցոնում փոսիրի մեջ, որնք փորվում էին հատուկ այդ նպատակի համար։

«Տեսնելով այս սրտաճմիկ երկութիւնները, միտք հղացանք նկարիչներ հրավիրել, որպեսզի տեսնեն իրենց աշքերով ալիք ամենը և գեղարվեստորեն պատկերացնեն այն դժունքը, որ վիճակիվ էր մեր ժողովրդին՝ իրեւ նշանակը մարդկային պատմության ծկել էր, ի միջի այլոց և Մարտիրոս Սարյանը, հայ նկարչական արվեստի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը, բայց ահավոր տեսարանների տպագորության տակ հիվանդացավ և չկարողացավ զիմանալ և շարունակել գործը։

«Եվ ինչպես կարելի էր զիմանալ այդ ծովածալվալ, սիրտ կեղեքով, մահվան ճիրաններում գալարվող եղբայրների տեսարանների առաջ. տեսնել հազարավոր երեխաներին, պատանիներին, կանանց և աղամարդկանց, պատավներից և ծերերից ոմանք արդեն մեռած, ոմանք տանջանքների մեջ կիսամեռ կմախք դարձած, նետված զետնի վրա, լացուկոծի կամ օգնություն կանչող պաղակներով» (Թեպի լույս և կյանք)։

Հայ ազգային և Հայրենյաց դժբախտության իրը նոր իմն ողբասաց երեմիա կամ երազատես Եղեկիել, Վիրդիկիոսի նետականին կամ Դանտենի Դժուխքին վայել բարձրությամբ կեղերերգեր մահասարսուռ տեսարանները և կխարաններ ոճրագործ մարդկության անհծապարտ ճակատը։

«Ի՞նչ լեզու կարող է ամենադույզն շափով

պատկերավորել պատմության այդ մեծ, անսահման ողբերգությունը, եղեռնը, որ կատարվեցավ մեր գլխին: Ի՞նչ լեզվով խոսենք, որ մեր ցալը, մեր անհատակ վիշտը, բողոքը անարդարության դեմ լսելի լինի այն ականջներին, որոնցից է կախված արդարության կշիռը վերականգնել: Մենք կրոնավոր ենք, և քաղաքականությամբ չեն որ այստեղ զբաղվում ենք, այլ հանուն արդարության, հանուն տարապարտուց նահատակված միլիոնավոր մեր զոհերի, նրանց փոշիացած ոսկորներին, մեր ձայնն ենք բարձրացնում, որ լսելի լինի, որտեղ պետք է:

«Մարդկային խիղճը չպետք է տանի, որ մի ամբողջ ազգ կարգավորյալ կերպով դեպի մահ քշվի, և մնացորդները աշխարհի չորս կողմը հողմացրիվ լինեն» (անդ):

1926-ին, լենինականի մեծ երկրաշարժի ժամանակ, Վեհափառ Կաթողիկոսի կողմեկորդի վոկուլության ու միխիթարության դորձին, կյանքի ու մահվան վտանգին:

1934-ին, իբր միազդը պատվիրակ երջանկահիշատակ նորեն կաթողիկոսի, կայցելե Սուրբ Էջմիածնա գրեթե բոլոր թեմերը և արարական ասպնջական երկիրները, և Սփյուռքի հայության մեջ կստեղծե մեծ խանդավառություն Հայրենիքի և Մայր Աթոռի հանդեպ, Էջմիածնի Մայր Տաճարի նորոգության համար հանգանակելով կարեվոր գոմար մը: Պատերազմի սկիզբը, համազգային հանգանակության ձեռնարկնե-

րու գլուխը անցնելով կհանգանակե 120.000 դոլար՝ Կարմիր Բանակի պատերազմի աղետյալներուն և 85.000 դոլար՝ Սասունցի Դավիթ տանկերու զորագունդին ի նպաստ» (Հորելյանական հայտագիր):

Ահա թե ինչո՞ւ անոր մասին բարձր կհնչե վկայությունը նորին Սուրբ Օծություն Ազգիս Ընդհանրական Հայրապետ Գեորգ Զ. Կաթողիկոսին, որ անոր հիվանդության առթիվ կպատգամե.

«Գարեգին Կաթողիկոս ճշմարիտ բարեկամն է Հայ Ժողովուրդին, Հայ Եկեղեցվու և Հայ Հայրենիքին, ու հարազատ զավակը Սուրբ Էջմիածնի: Ան սիրող և պահպանողն է Հայ մշակույթին և հիրավի կվայելկ անհուն սերն ու համակրանքը ամբողջ հայ ժողովուրդին, հայ մտավորականության և հայ Եկեղեցականության, ինչպես նաև Մեր Նորին Սրբությունը արժանի է սրտեռանդն ու շաղկության և խնամքի: Արդարեւ, ողբացյալ գիտուն կրոնապետի սրտի քնարին ամենն զգայուն և հեշտալուր լարն էր հայրենասիրությունը:

Անոր լուսապակ ճակատի և լուսավոր դեմքի ամենեն փայլուն շառայլն է հայրենասիրությունը՝ պրիսմակի յոթը գույներու էն փայլուն ճառագայթը:

Վերջին ժամանակներու ամենեն շատ բարխող և կարեվեր կոտտացողն է սիրտը Գարեգին Ա. հայրենասեր Հայրապետին:

Հովիվ բազ և անձնդիր...:

